ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԵՐԱՍԽ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1-Կ «20». 01. 2012թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ» ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով Երասխ համայնքի վարչական տարածքում 2012թ. սահմանել«Տեղական տուրքերի և վճարների» հետևյալ դրույքաչափերը, ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

Հիմնական օբյեկտների համար՝
ա)մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ յգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000ՀՀ դրամ:
բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30.000 ՀՀ դրամ:
բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50.000 ՀՀ դրամ:
բգ) 1001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 70.000 ՀՀ դրամ:
Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3.000 ՀՀ դրամ:
դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5.000 ՀՀ դրամ:
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների, վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով.
ա) չի նախատեսվում, կցակառույցների, վերնակառույցների շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 2.000 ՀՀ դրամ:

բ) Բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատեսվում է նաև վերնակառույցների,կցակառույցների,շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ) նախատեսվում է միայն, կցակառույցների,վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օբյեկտի իմաստով այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 5000 ՀՀ դրամ:

1-ին,2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը կիրառել 0,3 գործակցով:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսակի համար՝ 3.000 ՀՀ դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսակի համար՝ 3.000 ՀՀ դրամ:

5. Համայնքի տարածքում՝

ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքնչյուր օրվա համար 350 ՀՀ դրամ:

բ) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիք տարվա համար սահմանվում է 150.000/մեկ հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ:

6.Համայնքի տարածքում խաղատները, հանրային սննդի օբյեկտները, բաղնիքները /սաունաները/, զվարճանքի օբյեկտները ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ ընթացիք տարվա համար սահմանվում է՝

ա/ առևտրի օբյեկտների համար 25.000/ քսանհինգ հազար/ ՀՀ դրամ:

7.Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, ետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ընթացիկ տարվա համար 2.000ՀՀ դրամ:

8.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճար՝ 2000 ՀՀ դրամ:

2.Տեղական տուրքերի և վճարների հաշվարկելու և գանձելու կարգը պահպանելու պատասխանատվությունը դնել գյուղապետարանի գյուղապետի օգնականի վրա:

3.Տեղական տուրքերի և վճարների հաշվարկման և գանձման կարգի պահպանման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի վրա:

Ավագանու անդամներ՝

1. Հ. Համբարձումյան -կողմ
2. Գ. Սինանյան - կողմ
3. Խ. Խուդոյան -կողմ
4. Մ. Հայրապետյան -կողմ
5. Ս. Այվազյան -կողմ

Կ.Տ. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. Ավետիսյան